Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

«Ազգ եւ ժառանգություն»
Համահայկական երիտասարդական գիտաժողով

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
Ստեփանակերտ
սեպտեմբեր 26-30, 2006թ.

ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն
ԼՂՀ կրթության, մշակույթի եւ սպորտի նախարարություն
ՀՀ «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն» ՊՈԱԿ
ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության պալատ

«Ազգ եւ ժառանգություն»
համահայկական
երիտասարդական
գիտաժողով

Սեպտեմբեր 26-30 2006 թ.
Ստեփանակերտ

Գիտաժողովը նվիրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 15-ամյակին

Խմբագրական խորհուրդ

Ս. Խանյան -բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ
Վ. Բալայան- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ա. Մխիթարյան – հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Շ. Ասրյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս
Լ. Բեգլարյան- տնտեսագիտության ամբիոնի դասախոս

Գրքում զետեղված են սեպտեմբերի 26-30-ը տեղի ունեցած Համահայկական երիտասարդական գիտաժողովի զեկուցումները

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹ

Վահագն Զաքարյան
«Հայկական ՓԻ Էր ասոցիացիա»
գիտատեղեկատվական ԳԿ

Մեդիագրագիտությունը՝ 21-րդ դարի պահանջ

Մեդիագրագիտություն ("media literacy") հասկացությունն ի հայտ է եկել դեռևս 20-րդ դարի առաջին կեսին, երբ կանադացի նշանավոր մեդիատեսաբան Մարշալ Մակլյուենը հատուկ ուսումնական ծրագիր մշակեց, որի շնորհիվ դպրոցներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում սկսեցին ուսումնասիրել մեդիամշակույթին առնչվող հարցեր: Մինչ օրս էլ Կանադայում մեդիագրագիտության անհրաժեշտությունն ամենաբարձր մակարդակով է կարևորվում. բոլոր դպրոցներում և բուհերում դասավանդվում են մեդիաոլորտին առնչվող հատուկ ուսումնական ծրագրեր: Մեդիագրագիտության կարևորությունը ներկայումս քաջ գիտակցում են նաև Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում: 1994 թվականին ԱՄՆ պրեզիդենտի կողմից ստորագրվել է համապատասխան օրենք, որով «մեդիագրագիտությունը», որպես պարտադիր առարկա, դասավանդվում է բոլոր կրթական հաստատություններում: Իսկ Մեծ Բրիտանիայում «մեդիագրագիտություն» առարկան դասավանդվում է անգլերեն լեզվի ուսումնական ծրագրի շրջանակներում:

«Ռուսական մանկավարժական հանրագիտարանում» մեդիագրագիտությունը դիտարկվում է որպես ուղղություն մանկավարժության մեջ, որը ուսումնասիրում է զանգվածային հաղորդակցության միջոցների (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, ինտերնետ, կինո, վիդեո և այլն) օրինաչափությունները: Մեդիագրագիտության հիմնական նպատակն է, որպեսզի հասարակությունը ժամանակակից տեղեկատվական հոսքի պայմաններում պատրաստ լինի կյանքին, տարաբնույթ տեղեկատվության ընկալմանը, ստացված տեղեկատվության վերաբերյալ քննադատական մոտեցում ձևավորելուն:

Բազմաթիվ արտասահմանյան տեսաբանների կարծիքով 21-րդ դարում ապրող յուրաքանչյուր մարդու համար ՁԼՄ-ների ոլորտը ճիշտ հասկանալու և գնահատելու կարողությունը նույնքան կարևոր է, որքան կարդալը և գրելը: Մեդիագրագետ անձնավորությունը ի վիճակի է

վերլուծելու այն ամենը, ինչ ստանում է ՁԼՄ-ներից և որ ամենակարևորն է՝ «պատասխանատու քաղաքացի է»: Անչափ կարևոր է նաև, որ մեդիագրագետ քաղաքացի ձևավորվի դեռևս դպրոցից, բուհից, սակայն այդ կրթությունը պետք է շարունակվի նաև ողջ կյանքի ընթացքում, որովհետև, ինչպես հայտնի է, զանգվածային հաղորդակցության ոլորտը գտնվում է անընդհատ զարգացման մեջ, օրեցօր տեղի են ունենում նոր փոփոխություններ:

Անգլիացի մեդիատեսաբան Լ. Մաստերմանի կարծիքով մեդիագրագիտությունը կարևոր է նաև այն նպատակով, որ քաղաքացիները կարողանան արագ ընբռնել մեդիատեքստը, արագ կողմնորոշվեն, թե ում շահն է ներկայացվում տվյալ լրատվամիջոցով և արդյո՞ք տեղեկատվությունը օբյեկտիվ է ու ճշմարտացի: Այս հարցում կարևոր է հասարակությանն իրազեկել ՁԼՄ-ների գործառույթներին, «ժանրերին, ինչպես նաև լրագրողի աշխատանքին»: Մեդիագրագետ քաղաքացին պետք է բավականաչափ գիտելիքներ ունենա լրատվամիջոցների գործունեության կազմակերպման վերաբերյալ ոչ միայն իրեն տարատեսակ մեքենայություններից ապահովագրելու, այլև ճիշտ ժամանակին լրագրողներին նույնպես օգնության հասնելու համար: Պակաս կարևոր չէ նաև հասարակություն-լրատվամիջոցներ կապը առավել կենդանի դարձնելու համար ունենալ ՁԼՄ-ների իրավունքներն ու պարտականություններն իմացող քաղաքացիներ: Շատ հաճախ քաղաքացիները պարզապես անտեղյակ են, թե ինչով կարող են օգնել լրատվամիջոցներն իրենց և արդյունքում լինում են բազմաթիվ դեպքեր, երբ քաղաքացին թյուր պատկերացումներ ունենալով լրատվամիջոցների գործունեության մասին, խմբագրություն է դիմում անգամ ամենաանհեթեթ հարցով: Այս խնդիրը կարևորվում է հատկապես լրատվամիջոցների ղեկավարների կողմից: Մասնավորապես «168 ժամ» թերթի գլխավոր խմբագիր Սաթիկ Սեյրանյանի կարծիքով մեր քաղաքացիները երբեմն խմբագրություն են դիմում հարևանի պատը քանդելու խնդրանքով: Այսինքն քաղաքացիների մոտ մեդիագրագիտության պակասն այն աստիճան նկատելի է, որ շատ հաճախ դժվարացնում է լրատվամիջոցների գործունեությունը: Մեդիագրագիտության պակասը լրացնելու գործում օգնության պետք է գան ոչ միայն հանրակրթական դպրոցներն ու բուհերը, այլև հենց ՁԼՄ-ների կողմից այս ուղղությամբ պետք է հատուկ միջոցառումներ կազմակերպվեն:

Առանձնակի ուշադրության է արժանի մեդիաքննադատության ոլորտը, որը ուղղորդող և կրթող ուժ պետք է հանդիսանա

հասարակության համար՝ մեդիագրագիտության պակասը լրացնելու գործում: Կարևոր է, որպեսզի քաղաքացին ինքը կարողանա ոչ միայն ընթերցել թերթում տպագրված հոդվածը կամ պարզապես դիտել հեռուստահաղորդումը, այլև հարկ եղած դեպքում ի վիճակի լինի ակտիվ մասնակցություն ունենալ լրատվամիջոցի գործունեությանը: Մեդիագրագիտության հարցերով զբաղվող ռուս տեսաբան Ա. Ֆեոդորովը երեք հարց է առանձնացնում, որոնք առաջնային կարևորություն ունեն 21-րդ դարում մեդիագրագետ քաղաքացի ունենալու համար.

- նվազագույն գիտելիքներ ՁԼՄ-ների պատմության, կառուցվածքի, լեզվի մասին;
- զարգացնել մեդիատեքստը ընկալելու կարողությունը;
- լրատվամիջոցներով ներկայացվող նյութի հիման վրա զարգացնել ստեղծագործական հնարավորությունները, ինչպես նաև ինքնուրույն ստեղծել մեդիատեքստ:

Մեդիագրագիտության կարևորությունը ներկայումս օրընթացային պահանջ է հանդիսանում ողջ աշխարհում, սակայն Հայաստանում այս ուղղությամբ դեռևս գրեթե ոչինչ չի արվել: Բացի լրագրության ֆակուլտետների ուսանողներից զանգվածային հաղորդակցության ոլորտի մասին ոչ մի գիտելիք չի տրվում մյուս բնագավառներում մասնագիտացող ուսանողներին: Որոշ դեպքերում էլ հայաստանյան բուհերում ապագա լրագրողները մասնագիտական գիտելիքներ են ստանում ավելի թույլ ծրագրով, քան Ավստրալիայի հանրակրթական դպրոցի աշակերտները: Այս դեպքում միգուցե ավելորդ է այլևս խոսել հասարակության լայն շերտերի մեդիագրագիտության մասին, սակայն փաստ է, որ այսօր մեր քաղաքացիներին մեդիամոլորությունից դուրս բերելու լավագույն և միակ տարբերակը հիմնավոր մեդիակրթության պակասը լրացնելն է: Մեդիագրագետ քաղաքացին ի վիճակի է զանազանել «եթերային աղբը» արժեքավոր ստեղծագործությունից: Մեդիագրագետ երտասարդը այլևս ամեն վայրկյան վտանգված չի լինի MTV-ի հոգեկան շեղում ունեցող հեղորդավարների ցածրորակ հեռուստահաղորդումներով հիանալու: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ մեդիագրագետ քաղաքացու պահանջները զանգվածային հաղորդակցության միջոցներից միանգամայն այլ որակական հատկանիշներ ունեն: Դեռևս 6 տարեկանից մեդիագրագիտություն առարկան ուսումնասիրող գերմանացի աշակերտին դժվար թե հնարավոր լիներ մոլորեցնել հայաստանյան «ԱԼՄ» հեռուստաընկերության

ղեկավարության կողմից կիրառվող մոլորեցնող միջոցներով: Պատճառը ամենևին էլ ժողովրդի սոցիալական դժվար պայմանները չեն, այլ եթերային ցածրորակ պահանջմունքները: Այստեղ սխալ կլինի նաև մեկնաբանել նախապես մշակված գրագետ «փի արդ» տեխնոլոգիաների առկայությունը, քանի որ ամեն ինչ արվում է շատ պարզ եղանակով և այն համոզմունքով, որ «ԱԼՄ»-ի համահայաստանյան հեռուստալսարանը պարզապես մեդիագրագետ չէ:

Մեդիագրագիտության պակասը հատկապես առավել նկատելի է դառնում նախընտրական քարոզարշավի շրջանում, երբ քաղաքացիները լուրջ դժվարության առջև են կանգնում «թացը չորից» տարբերակելու գործում: Այսինքն, ինչպես պնդում են բազմաթիվ արտասահմանյան մեդիատեսաբաններ, քաղաքացիական հասարակություն կառուցելու ճանապարհին անչափ կարևոր է գիտակցել նաև մեդիագրագետ քաղաքացի ունենալու անհրաժեշտությունը: Որպես ամփոփում հնչած մտքերի՝ հարկ է մեկ անգամ ևս նշել օր առաջ մեդիագրագիտության ոլորտին առնչվող համապատասխան ծրագրերի մշակման և կիրառման կարևորությունը հայաստանյան հանրակրթական դպրոցներում և բուհերում: Մեդիագրագիտությունը մեր օրերում օրընթացային պահանջ է և 21-րդ դարի քաղաքացուն այլևս անհնար է պատկերացնել առանց զանգվածային հաղորդակցության ոլորտին առնչվող գիտելիքների իմացության:

Վահան Դիլանյան
«Քաղաքական զարգացումների հետազոտական կենտրոն»

Հայ հոգևոր ու նյութական մշակույթի գանձարանը

Հայ ազգը, ինչպես և իր մշակույթը առանձնահատուկ է սեփական էությամբ: Ցանկացած մշակույթ իր նյութական և հոգևոր տեսակներով տվյալ ազգի կերպարի արտացոլանքն է. այն իր մեջ ամփոփում է տվյալ հանրույթի՝ պատմական հոլովույթներում ձևավորված վարքաբանական, պատմահոգեբանական, ֆիզիկակենսաբանական արժեքները:

Հայ ազգի մշակույթի գանձարանն իր կառուցվածքով «աչքի պես բարդ է և պարզ»: Այն ձևավորվել ու զարգացել է մեծամասամբ Այլքի տիրապետության ներքո կամ հայ եզերքից դուրս: Այս հանգամանքը ոչ միայն ձևավորել է հոգեբանական ազատագրության ձևաչափային գիտակցություն – հոգեբանությունը, որն, ըստ երևույթին, նպաստել է

Ֆորմատ 84x60/8, ծավալը՝ 10.5 տպագրական մամուլ,
տպաքանակը՝ 300, թուղթ՝ օֆսեթ:
Տպագրությունը՝ «ՊՈԼԻԳՐԱՖ» ՓԲԸ
Ստեփանակերտ, Վ.Մամիկոնյանի փող., 21,
հեռ 4-89-96, 4-89-97, 4-89-98,

ПОЛИГРАФ